

«ԵՐԵՒԱ» ՀԱՄԿԱՅՈՒՅԹԸ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄ

Մշակույթն իր էությունը, ծագումով և արտահայտման առանձնահատկություններով ազգային երևույթ է: Էթնոսի կենսաբանական, հոգեբարոյական, լեզվամտածական և այլ հատկություններն անմիջական դրոշմ են թողնում հոգևոր մշակույթի վրա:

Այս հաղորդման մեջ անդրադարձ է կատարվել *երեխա* հասկացության կրոնական ընկալմանը՝ հաշվի առնելով այն, որ կրոնն ուրույն տեղ ու դեր ունի մշակույթի համակարգում, որպես մշակույթի տարր, մշակութային արժեք և իրականությանը հարմարվելու ընդհանրական միջոց:¹

Մշակույթը՝ որպես հոգևոր պահանջմունք, հավասարապես հասցեագրվում է բոլորին, այդ թվում՝ երեխաներին: *Երեխա* հասկացությունը բովանդակությամբ անբակտեղիորեն է կապված մշակութային աշխարհի հետ: Յուրաքանչյուր լեզվամշակութային երեխան մարդկության բարձրագույն արժեք է: Արժեքը մշակույթին հաղորդում է իմաստ, նշանակություն, որոշակի իդեալ, հոգեբարոյական յուրահատկություն: Արժեքը և մշակույթը սերտաճած են միմյանց: Երեխան է մշակույթին հաղորդում այդ յուրահատկությունը, որովհետև նրան ներհատուկ է գոյության արժեքային յուրահատկությունը, արժեքայինով իր կյանքն ու կեցությունը իմաստավորելու, ինքնաբացահայտվելու ներքին հնարավորությունները, որոնք դառնում են նաև մարդկային ու հասարակական հարաբերությունների կազմավորման անհրաժեշտ պայմաններ:

Ինչպես տարբեր դարաշրջաններում, այնպես էլ տարբեր ժողովուրդների պատմության մեջ կրոն-մշակույթ փոխհարաբերությունը ունեցել է յուրահատուկ դրսևորումներ: Պատմականորեն կրոնը մեծ ազդեցություն է ունեցել ազգային ինքնագիտակցության, լեզվամտածողության, ինչպես նաև մշակութային ինքնության վրա:

Փորձենք համաշխարհային կրոնների համատեքստում դիտարկել *երեխա* հասկացության կրոնական պատկերացումները:

Սուրբ Գրքերի շարքում պատմամշակութային մեծարժեք ստեղծագործություն է Աստվածաշունչը, որն ունի ուրույն մտեցումներ մեր կողմից դիտարկվող հասկացության վերաբերյալ: Ո՛վ է *երեխան*, ո՞րն է նրա աստվածաշնչյան սահմանումը: Առաջնային իմաստով՝ *երեխա* հասկացության ընկալվել է բնական սերունդ իմաստով: Դասական մատենագրության մեջ բառը վկայվել է *երախա* ձևով և նշանակել է անկունք, քրիստոնեական մկրտություն չստացած անձ: Երախայությունը, այսինքն՝ անկունք լինելը, կապ չունի տարիքի հետ: Հին հայերենում կիրարկվել է նաև *երախայացուցանել* բառը, որը նշանակում էր մկրտել:

Հետագայում, երբ սովորություն դարձավ մկրտությունը կատարել մանուկ հասկում, *երախա* բառն էլ ստացավ մանկիկ, նորածին նշանակությունը: Որոշ մեկնիչներ բառի ծագումը կապում են *երախ* բառի հետ: Այսինքն՝ *կաթնկեր*, որ չունի բերան՝ խոսելու համար: Հր. Աճառյանը մերժում է այս հայեցակետը՝ բառը համարելով փոխառություն ասորերենից:²

¹ *Религия в истории и культуре, Учеб., М., 2000, стр. 29.*

² *Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Բ, Եր., 1973, էջ 35:*

Վկայակոչենք *երախա* բառի գործածությունը «անկնունք» իմաստով՝ ըստ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության»։ «Յոհան եպիսկոպոսը մարդկանց աչքում փորձում էր ձևանալ ժուժկալ, բայց չափից դուրս ընկղմված էր ազահության մեջ։ Մի անգամ նա տեսնում է մի անծանոթ աշխարհականի՝ ձի հեծած, մեջքին տուր կապած։ Հաշվի չառնելով այդ մարդու հոգեակարագիրը և զբաղմունքը (վերջինս ավազակաբարո էր)՝ Յոհան եպիսկոպոսը նրան երեց է ձեռնադրում, և այդ աշխարհականը, տուն գալով, ընտանիքին ասում է. «Վեր կացեք, աղոթք անենք, ես երեց եմ» Կհինը ամուսնուն գարմացած ասում է. «Չէ որ դու *երախա* էիր, դեռ մկրտված չէիր»։³

Երեխա ունենալը՝ որդեծնությունը, համարվում է Աստծո պարգևած բարիք ու օրհնություն /Սղմ, ՃԻՁ 3-4, ՃԻԷ 3-6/: Ըստ 127-րդ սաղմոսի՝ *երեխան* օրհնություն է, մարդկային սեռը պահպանելու համար Արարչի տված անհատույց պարգև։ Հին Կռակարանի հավատացյալները երեխայի մեջ տեսնում էին շռայլությամբ լի շնորհի նշան։

Քրիստոնեական ուսմունքի քարոզչության ընթացքում ավետարանիչները, նաև Պողոս առաքյալը, ուսուցանում են, որ Երկնային Հայրը մեր հոգիների հայրն է, և որ նրա ժառանգ լինելը այնպիսի հիմնական սկզբունք է Ավետարանում, որ նույնիսկ երեխաներն են հայտարարում այդ ճշմարտության մասին, երբ երգում են «Աստծո զավակն եմ» երգը։

Երեխան և նրա աստվածահաճո դաստիարակությունը մեծ տեղ են զբաղեցնում Աստվածաշնչում, որտեղ նա ներկայանում է որպես անմեղ, հոգով պարզ, խոնարհ և Երկնքի արքայությանը ժառանգակից անձ։ Ավետարանական դրվագներից մեկում պատմվում է, թե ինչպես, երբ Հիսուսի մոտ էին բերում մանուկների, առաքյալներն արգելում էին՝ մտածելով, թե դա հոգություն կպատճառի Վարդապետին։ Այդ տեսնելով՝ Քրիստոսն ասում է. «Թո՛ւյլ տվեք այդ մանուկներին և մի՛ արգելեք, որ նրանք զան ինձ մոտ, որովհետև Երկնքի արքայությունը այդպիսիներինն է» /Մատթ. 19:14/: Ավետարանական մեկ այլ դրվագում Քրիստոսը, որպես կատարելության տիպար, իր աշակերտներին է ներկայացնում մի մանկան՝ վկայելով. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի։ Արդ, ով իր անձը խոնարհեցնում է ինչպես այս մանուկը, երկնքի արքայության մեջ նա մեծ է» / Մատթ. 18:3-5 L/: Քրիստոսի խոսքերի մեջ ընդգծվում է հոգու այն մաքրությունն ու անմեղությունը, որը բնորոշ է բոլոր մանուկներին և հատկանշական պետք է լինի նաև նրա հետևորդներին։

Մանուկների բարեկրթման հարցը Սուրբ Գրքի շրջանակում առաջին անգամ արծարծվել է Ծննդոց գրքում. «Աբրահամը հաստատապես, մեծ և բազմանդամ ազգի նախահայր է լինելու և նրա միջոցով պետք է օրհնվեն երկրի բոլոր ազգերը, որովհետև ես գիտեի, որ նրանք Տիրոջ ճանապարհով պիտի ընթանան՝ պահպանելով արդարությունն ու իրավունքը»/ Ծննդ. 18:18-19/: Հետագայում երեխայի բարեկրթման հարցին հանդիպում ենք Սողոմոն Բնաստունի խրատներում. «Խրատի որդուդ, որպեսզի այդպես բարի հույս լինի լինի քեզ համար» /Առակ 19:18/, Խրատի որդուդ, և նա քեզ հանգիստ պիտի պարգևի և զարդ պիտի լինի հոգուդ համար /Առակ 29:17/: Թերևս դաստիարակության քիչ ավելի խիստ միջոցներ է խորհուրդ տրվում Միքայի գրքում. «Եթե զավակներ ունես, խրատի նրանց, մանկությունից խոնարհեցրու նրանց պարանոցը»/ Միք. 7:25/: Այսինքն՝ կրոնական ընկալմամբ դաստիարակության առաջին

³ Փավստոս Բուզանդ, *Հայոց պատմություն*, Եր., 1987, էջ 409:

դրսևորումներից մեկը խոնարհությունն է, հնազանդությունը ծնողների և աստվածային պատվիրանների հանդեպ:

Երեխայի կրոնական դաստիարակության տեսանկյունից քրիստոնեության մեջ կարևոր նշանակություն ունի մկրտման խորհուրդը:

Քրիստոնեական աշխարհում երեխային մկրտում են հասարակության մեջ իր տեղը գտնելու նպատակով: Քրիստոնեության մեջ կնունքը կապվում է մեղքից մաքրվելու հետ, որը ջրի պաշտամունքի վերառումն է քրիստոնեության մեջ, դրա քրիստոնեականացումը: Կնունքը նաև նպատակ է հետապնդում մաքրել երեխայի նախածին մեղքը: Բավականին հետաքրքրական է *մեղք* հասկացությանը Պողոս առաքյալի տված բնութագրությունը: Հռոմեացիներին ուղղված իր թղթում նա ասում է. «Գիտե՞ք, որ օրեցօր հոգեւոր է, իսկ ես մարմնաւոր եմ՝ մեղքին վաճառուած, քանի որ չեմ իմանում, ինչ որ գործում եմ: Իսկ արդ՝ ես չէ, որ գործում եմ այն, այլ իմ մէջ բնակուող մեղքը: ... Ապա ուրեմն ես իմ մտքով ծառայում եմ Աստուծոյ օրէնքին, իսկ մարմնով՝ մեղքի օրէնքին» Թուղթ առ Հռովմ. Է, 14-25:

Մկրտության ժամանակ քրիստոնեական աշխարհում նորածինն տալիս էին այդ օրը հովանավորող որևէ սրբի անուն՝ նրան երեխային պահապան հրեշտակ և հովանավոր դարձնելու համար:⁴ Անվանակոչման գործում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում անվան՝ որպես նշանի և էության արտացոլում լինելու հանգամանքը: Բոլոր անունները նշաններ են, բայց նախնական լեզվում անունն ու նշանակվող առարկայի, երևույթի էությունը համընկել են, օրինակ՝ Հրաչյա-կրակոտ աչքեր ունեցող և այլն: Հին հունական իրականության մեջ անունները երեխաներին տալիս էին հասուն տարիքում, երբ արդեն բացահայտված կլինեին նրա էությունը: Մեծական ժողովուրդները երեխայի անվանակոչումը կապում էին աստծո հետ, ինչպես, օրինակ, *Հովհաննես* անունը, որ ծագել է *Եհովան ողորմած է բառերից*:⁵

Հայ ընտանիքը երեխային սրբացրել է՝ ընդհուպ պաշտամունքի հասցնելով նրա նկատմամբ ծնողական սերը: Հայ իրականության մեջ երեխան համարվում է անընդհատականության, սերնդեսերունդ շարունակվելու նախադրյալ: Ի սկզբանե անհավասարություն կա տղա և աղջիկ երեխաների ծննդի ընկալման հարցում: Տղա և աղջիկ երեխաները՝ իբրև տարբեր սեռերի ներկայացուցիչներ, տարբեր են իրենց կարողություններով, սակայն մեկ են աստվածաստեղծ բնությանը: Մեռային տարբերությունը կարելի է լուսաբանել քրիստոնեական հավատքի երկու մեծագույն խորհուրդների՝ Սբ Երրորդության և Քրիստոսի անձի լույսի ներքո: Հետաքրքիր է հատկապես Ծննդոց գրքի մեջ առկա արարչագործության դրվագի դիտարկումը, որտեղ առաջին անգամ ակնարկվում է սեռային տարբերության մասին: Արարչագործության մեջ Աստված որպես արարման մղիչ ուժ դնում է սեռային տարբերությունը:

Երեխա հասկացույթի վերաբերյալ յուրահատուկ մտտեցում է դրսևորվում նաև բուրդայական ուսմունքում, որտեղ հատուկ ուշադրության է արժանանում երեխայի բարեկրթման, դաստիարակման հարցը: Մանկության տարիները համարվում են երջանկության շրջան: Երջանիկ է այն երեխան, ով պաշտպանված է ծնողների կողմից, ովքեր երեխային առաջնորդում են դեպի բարին, լույսը, ճիշտ ճանապարհը: Բուրդան կարևորում է երեխայի միտքը, հոգին կրթելու գործունը. «Երեխայի ծնվելուց ի վեր

⁴ www.heqiat.am/index.php

⁵ <http://hy.wikipedia.org/wiki/>

ծնողը պատասխանատու է սնելու, զարգացնելու երեխայի միտքը: Բուրդայականության մեջ երեխան իր էությանը ոգեղեն հոգի է՝ Գերագույն Տիրոջ անբաժան մասնիկը: Երեխան պետք է գործի Քրիշնա գիտակցության մեջ, քանի որ առանց այդ գիտակցության նա կայլասերվի»:⁶

Արևելյան մշակույթներում, հատկապես հնագույն հնդկական հավատալիքներում երեխայի սաղմնավորման սերմը Քրիշնան է տալիս՝ այն դնելով նյութական բնության մեջ, որից բազմաթիվ կենդանի էակներ են ծնվում. «Ով Կունտիի որդի, կյանքի բոլոր տեսակները գոյություն ունեն այս նյութական աշխարհում ծնվելու շնորհիվ, և Ես եմ սերմնատու հայրը»:⁷

Ուշագրավ է աղջիկ երեխայի նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը բուրդայականության մեջ, առավելապես, կնոջ նկատմամբ շեշտված թշնամական վերաբերմունքը: Ըստ այսօրինակ պատկերացման՝ կինը տանջանքներով լի նյութական աշխարհի՝ սանսարայի մարմնացումն է:

Իսլամի Սուրբ Գիրքը՝ Դուրանը, նույնպես ունի որոշակի անդրադարձ մեր կողմից դիտարկվող հասկացությից: Ըստ Դուրանի այսբների՝ Երկնքի և Երկրի արարիչը մարդուն արարեց հողից՝ տարբերակելով նրա երկու՝ արական և իգական սկիզբները: Տղա կամ աղջիկ երեխա ունենալու իրավունքների մեջ գոյություն ունեն տարբերություններ, որոնք մարդկային պատմության ընթացքում միշտ էլ քննարկման առիթ են եղել: Առավել ակնհայտ տարբերություններից մեկը ժառանգականությունից օգտվելու իրավունքն է. «Աստված ձեր զավակների մասին պատվիրում է, որ ձեր արու զավակի ժառանգության բաժինը երկու էզ զավակի բաժնին հավասար լինի»:⁸ Դուրանում նսեմացված է կնոջ արժանապատվությունը: Նրա օրենսդրական մասում՝ շարիաթում որոշակիորեն նշված է, որ կինը երկրորդական էակ է: «Արուները, - ասում է Դուրանը, - պիտի բարձր կանգնած լինեն իրենց կանանցից, որովհետև ալլահը, առաջիններին արտոնություններ տալով, տեր է կարգել երկրորդների վրա» և էլի այն պատճառով, որ նրանք իրենց ունեցվածքը ծախսում են կանանց վրա:⁹ Դուրանը հատկորեն հայտարարում է, որ տղամարդը կնոջից բարձր է:

Իսլամի մեջ կինն արժեզրկված է: Անհավասարությունը նկատելի է նաև տղա և աղջիկ երեխաների դաստիարակության մեջ: Վաղ մանկությունից աղջիկները սովորում են հնազանդվել: Տղան կարող է հարգել միայն այն կնոջը, որը պատկանում է իր ընտանիքին: Իսկ ընտանիքից դուրս՝ նա կարող է ատել բոլոր մյուս կանանց, բացառությամբ նրանից, ում հետ պետք է ամուսնանա: Ամբողջ մանկության ընթացքում աղջիկ երեխաներին սովորեցնում են, որ կինը գոյություն ունի միայն ծառայության և արուին հաճույք պատճառելու համար:¹⁰

Ըստ Դուրանի՝ մանուկների համար առաջնայինը կյանքի, ամուր և կայուն ընտանիք ունենալու իրավունքն է: Հաջորդ իրավունքը վերաբերում է ճշգրիտ մեթոդներով ու սկզբունքներով նրանց դաստիարակությանը: Մահմեդական ավանդույթում կանոնակարգված է նաև երեխայի դաստիարակման և սնուցման հարցը: Մայրը պետք է

⁶ Ա.Չ. *Քհակտիվեդանտա Սվամի*, Պրաքիուպադա, Բուք Թրասթ, 1991, էջ 36:

⁷ Նույն տեղում, էջ 67:

⁸ www.yerevan.incro.ir/index.asp/siteid/

⁹ Տե՛ս *Климович Л.М.*, *Ислам*, М., 1965, էջ 48:

¹⁰ *Կայսյան Ահ.*, *Իսլամի իմացություն*, Եր., 1996, էջ 117:

երեխային կերակրի երկու տարի և ունենա հորից առավել իրավունքներ, քանի որ նա է հղիության և հետագա կյանքի ընթացքում տանջվել, երկունքի ցավեր ունեցել և զոհաբերել իրեն՝ հանուն իր երեխայի բարեկեցության:

Ինչպես կնունքը քրիստոնեական, այնպես էլ թլպատման ծեսը իսլամական աշխարհում իրականացվում է արու զավակի կրոնական պատկանելիությունը ընդգծելու համար և նրան տվյալ համայնքին, հասարակությանը անդամագրելու, ինտեգրելու իմաստն ունի:

Ընդհանրացնելով կարելի է նշել. *Երեխա* հասկացույթի ուսումնասիրությունը պիտի կատարել մշակութային տարբեր շերտերում: Անդրադարձը մշակույթի կրոնական շերտին, ցույց է տալիս, որ, չնայած տարբերություններին, «Երեխա» հասկացույթի ընկալման ընդհանրություններ կան տարբեր կրոններում, որոնք վկայում են նրա՝ արժեքային համակարգում ունեցած կարևոր դերակատարումը:

ПОНЯТИЕ “РЕБЕНОК” В РЕЛИГИОЗНОМ АСПЕКТЕ

____ *Резюме* _____

____ *А. Матикян* _____

Культура - явление национальное. В сообщении понятие “ребенок” рассмотрено в ракурсе мировых религий, так как в любой системе культуры религия играет особую роль.

В каждой языковой культуре ребенок – это высшая ценность человечества. И поэтому ценность и культура взаимосвязаны друг с другом. Несмотря на различия в разных религиозных аспектах, тем не менее, понятие ребенка рассматривается как один из важнейших носителей системы высших ценностей.